



81. ԲԱԽՏԻ ԵՂՈՒՆԻԿԸ

Ասում են, թե մեզանից օխտը սարի էն ղոլին, մեր ապուպապի վախտը ապրիլիս ա ինըմ մին թաքավոր, ըստան էլ ինըմ ա, ինըմ չի, մին մինուճար տղեն ա ինըմ, քըսան տըրեկան մին լիսնյազալիս ջնհիլ, անըմն էլ Սըղըմոն: Սըղըմոն Իմաստունի մընան խելքի ծով:

Էս Սըղըմոնը մին վիրու եղունիկ ա փըռնած ինըմ հու սըվորցընըմ ա մարթի մընան խոսալը:

Եղունիկը հենց որ ըսկսըմ ա թեհրին-թեշխուստին խոսալը թաքավորի տղին ասըմ ա.—Ես քու Բախտի եղունիկն եմ, իզ տի'ր ոսկի ղանփանգի մեչին հու լավ եչի': Ինչ որ ասես, էն պետմա կաղաբես, որ վերչը փուշմանես ոչ:

Սըղըմոնն էլ մին նախշուն ոսկի ղանփանգ ա շինիլ տալիս, եղունիկին տինըմ մեչը, պահըմ ուրա օթաղըմը, ըշտեղ էլ քինալիս ա ինըմ, նհետը տանըմ ա:

Թաքավորը ուզըմ ա տըղին փըսակի, որ հարս ու թոռներովը ուրխանա, համա տղեն համանչա ուրա էչն ա քըշըմ, թե ես ուզիլու վեմ էն ախճըկան, որին եղունիկը դաբուլ ինի:

Տո՛ւ մի ասիլ, մին անքամ Սըղըմոնը արագ ա տենըմ:

Արագին մագերը սաթի մընան սև, իրեսկըհատը կաթի մընան սիպտանկ, աչկերը՝ մին-մին փիալա, ունքերը՝ յաթաղանի մընան կեռ մին գողջալ ա կնլիս կուշտը հու ասըմ.—Թաքավորի՛ տղա, սիրտըս քու սերիցը ախըր հալումաչ ա ինըմ, էտ խի՞ չես իրևըմ: Ա՛ռ էս ոսկի մըտանին, թե որ ուզես ինձ ճարես, մինանկ էս մըտանով կըճարես, էտ մըտանին մորըս հըրսընքի մըտանին ա, որ փեշքեշ ա տըվել ինձ, ալևի մեչին էլ իմ չիքիլն ա:

Սըղըմոնը որ զանթնըմ ա, տենըմ ա, ղորթ որ մին մըտանի կա մատին, ալևի վըեն էլ մին հոլրի-մալանգի պատկեր:

Էս արագը պատմըմ ա եղունիկին, մըտանին նըշանց տալիս, եղունիկն էլ՝ թե.—Թաքավորի՛ տղա, տո՛ւ դանդ մի՛ անիլ: Մինչու մհի ես քեզանա ջողզն չեմ իլել, համա վախտը եկել ա, իզ պետմա պանց թողաս: Հոլրի-մալանգը ըշտեղ էլ ինի, օխտը սարի քամակի,

օխտը ծովից էն դու էլ ինի, մին ա ճարիլու վեմ քե մըհար,—ասըմ ա եղունիկը հու թըռնըմ, քինըմ:

Շատ թաքավորների, նազիր-վազիրների ախճըկերանց աչկն ա մընըմ ճընապին, թա՛ հեսա, հուր որ ա, Սըղըմոնը պիտի կա՛ ուրանց հավան կենալի, համա Սըղըմոնը կա ոչ ու կա ոչ:

Հերն էլ մին դուլից ա դաշանք-պըղատանք անըմ, որ փըսակ-վի, Սըղըմոնը երկու ոտը մին չըմըչկի մեչ ա տինըմ, թա՛ չէ՛: Ես իմ հարսնացուն ունեմ, ընդրան պիտի ճարեմ:

Մենք թողանք թաքավորին հու Սըղըմոնին ուրանց ցավովը տըպակվիլիս խաբարը տանք եղունիկիցը:

Եղունիկը, Սըղըմոնի մըտանին հու ախճըկա մըտանին վզիցը կապած, ախշարքը տալիս ա ոտի տակը, համա հալամ ճարած չի ինըմ: Ելհամ օխտը օր, օխտը քըչեր թըռնըմ ա, առանց հաց ու ճըրի անց ա կենըմ մին կապուտ ծով, մինչու հըսնըմ ա մին կանանչի, բաղ ու բաղավաթի մեչ կորած քաղաքի:

Քաղաքի մեյդանըմը տենըմ ա մին նախշուն ամարաթ, կըլխի յա ընգնըմ, որ կա, կա ոչ, էտ թաքավորի ամարաթն ա:

Թըռնըմ, վեր ա կալիս մին չինարի ծառի: Մին էլ տենըմ ա մին ախճիկ ոսկի սինու մեչին տիրած ճաչ ա տանըմ:

—Մինչու գիղամ ոչ, էտ ում մըհար ա էտ հացը տանըմ, ըստեղան ծեռք չեմ քաշիլու,—ասըմ ա եղունիկը հու ըսկսըմ թըմաշա անիլը: Էս ախճիկը մատմառի մարդըվաններովը պըցըրանըմ ա, մին կանանչ տոռ ա պաց անըմ հու անսաս նի մըննըմ: Եղունիկը թըռնըմ ա էտ օթաղի ակուշկին հու տենըմ ա ղուշի պարցերին մե թինգը տված մին հոլրի-մալմազ ա նըստած, ուրա՛մ ման եկած ախճըկա նհետ՝ մին մազ մեչիցը կըտրած:

Եղունիկն ըսկսըմ ա ղընղընալը.—Եկել եմ ըստեղ, գիղըմ չեմ ըչտեղ, մին պան եմ պերել, գիղըմ չեմ իչ պան:

Սասը որ ընգնըմ ա ախճըկա անգաճը, ակուշկեն պաց ա անըմ, տենըմ մին նախշուն եղունիկ ա ակուշկի կոքին նըստած:

—Եկել եմ ըստեղ, գիղըմ չեմ ըչտեղ, մին պան եմ պերել, գիղըմ չեմ իչ պան,—էլհամ ասըմ ա եղունիկը:

Թաքավորի ախճիկն ասըմ ա.—Լավ ես արել, որ եկել ես, էս իմ հոր ամարաթն ա, հերըս էլ էս Կանանչ երգըրի թաքավորն ա, պերածըտ էլ, թա՛ որ նըչանց տաս, կասեմ՝ ինչ պան ա:

Եղունիկը նըչանց ա տալի Սըղըմոնի մըտանին:

Ախճիկը որ մըտանին տենըմ ա, եղունիկին առնըմ ա խըտիտը հու ըսկսըմ պըչպըչորիլը:

—Տո՛ւ ըչտեղան լիս ախշարք ընգար, ա՛յ եղունիկ, ով ա քե մարթի լուզո՛ւ տըվել,—հըրցընըմ ա ախճիկը:

—Ես Բախտի եղունիկ եմ, իմ տրրոնչ բախտին եմ ման կնլիս: Հենց ա, թիւ քըթել եմ, ա՛յ չարմաղ ախճիկ:

—Է՛հ, եղունի՛կ ջան,—թանռանչ քաշիլով ասըմ ա ախճիկը,—դիւզ ա, անըմըս Շարմաղ ա, համա բախտըս սև ա: Էրեզ քըչեր արագիս ոսկիքնքոնլ, բոյ ու բուսաթով մին կըտրիճ եկավ կուշտըս, իմ մոր մըտանին նըշանց տվավ ինձ, ասավ՝ էս մըտանին քունն ա, ասի՝ հա՛: Ասավ՝ դե որ քունն ա, տու վել իմն ես... Ռավոտը վեր կացա, տեսա՝ ո՛չ տղեն կա, ո՛չ էլ մըտանին: Ո՞վ ինձ մըհար բախտի տոնոր պնց կանի:

—Շարմա՛ղ, ես ընգա քու ծեռը, համա քու բախտը իմ ծեռին ա,—ասըմ ա եղունիկը,—արագըմըտ տեսած տղեն հենց էտ մըտանու տերն ա, իմ էլ տերն ա, որն ինձ դըրկել ա քե ման կնլի: Թիւ վըհատըմ չես, վըզիցըս մին մըտանի էլ ա կապած, պն՛ց արա, տե՛ս, քո՞ւնն ա:

Շարմաղը որ մըտանին տենըմ ա, հոնչը քինըմ ա: Եղունիկը թըռնըմ ա, կընդիջով ճոնր ա պերըմ, լըցնըմ ախճկա պերանը, ախճկա հոնչը կնլիս ա տեղը:

—Ես քու եկած ճընապին մատաղ, եղունի՛կ,—ասըմ ա Շարմաղը,—դորթ որ տոն Բախտի եղունիկ ես: Դե եկ քինննք հորըս կուշտը, խոսանք, հերըս խոստացել ա, ինձ տա էն մարթին, որն իմ սըրտովը կինի:

Քինըմ են թաքավորի կուշտը, մըսըհաթ են անըմ, հերը ռազի յա կենըմ, միննակ ասըմ ա՝ իչքան շոնտ ինի, էնքան լավ ա, չոնքի Շարմաղի ուզողին շատ են, զանլն են տանըմ:

Եղունիկն ասըմ ա.—Ըստեղ կնլիս ճընապեն ծանոթ չէր, տասը օրըմ եմ եկել, ման կնլով եմ եկել, մհի իրեք օրըմը կըհըսնեմ տեղ, օխտը օրըմն էլ կըկանք ետ, ընենց որ տասը օրից եղը կոռծը կլոխ կըկն:

Թող Բախտի եղունիկը թըռնի ետ: Մենք խանրար տանք Սըղըմոնիցը:

Եղունիկի թըռնիլից եղը Սըղըմոնը օր օրի վըն մաշվըմ ա, ռավոտից ընդոն ախքաշիլով ա ման կնլիս, ոնց որ բալեն կորցըրած մերը: Մըտկովը հազար ու մին փիս պնն ա աս կենըմ: Յարաք եղունիկին գոնլախըրով արան, թիւ մըսակեր դըչերը ցըրիվ տվան ոնրա Բախտի եղունիկին: Համա ոչ մին տեղ քիննլ, եղունիկին ման կնլ կարըմ չի, քանինչ որ գիղըմ չի, թիւ որ դոլն ա թըռել: Հենց էս մըտկերի մեչ ա ինըմ Սըղըմոնը, եփ եղունիկը վե ա կնլիս ուսին:

Սըղըմոնի իրեսկըհատը պնցվըմ ա, ասըմ ա.—Ագի՛ղ, էսքամ վախտ ըշտե՞ղ ես, ախըր հոքիս պերանովըս տոնս եկավ, հենց ի գիղըմ, թիւ հարամու ծեռ ես ընգել, էլ կնլոն չես:

—Բա ես հարամու ծեռ ընգնող եմ: Քիննացել ի քու բախտի են-
նեն հու քրթա, —ասում ա եղունիկը, —արագըմըտ տեսած ախճիկը
Կանանչ երգրի թաքավորի ախճիկ Շարմաղն ա, էդ ախշարքն էլ
կնապոտ ծովի էն ղըրաղին ա: Շարմաղ մի' ասա, մթնի մեչ լիս-
նյագի մընան լիս տրվող ասա, բա որ խոսում ա, հենց ա Հազարան
բոլբոլ ինի: Շիքիլըտ որ տեսավ, հոչը քինաց, ինքն էլ ա քե արա-
զըմը տեսած իլել: Դե հազըրվի, օխտը օրից քինըմ ենք, պերենք:

Թաքավորը, որ լսւմ ա, թն Սըղըմոն տղեն հարսնացու յա ճա-
րել, ախշարքովը մին ա ինըմ, մեծ թնդարիքով ղըրկըմ ա հարսին
պերիլի:

Հըրսընքավորը որ տեղ ա հըսնըմ, Շարմաղը չիմմի մեչին
նլընհնլը ճընանչըմ ա Սըղըմոնին, քինըմ փըթաթվըմ ա կուլովը:

Սըղըմոնն էլ որ Շարմաղին տենըմ ա, քիչ ա մընըմ՝ խելքը
թըռցնի, էնքամ տուրեկան հոլրի-մնլնգ ա ինըմ:

Օխտը օր, օխտը քըչեր հըրսանիք են անըմ: Օխտը օր, օխտը քը-
չեր քաղաքի չիմմ ժողովուրթը լիանըմ ա թաքավորական սուփրի-
ցը: Հըրսանիքը որ պըրծընըմ ա, թաքավորը ախճըկանը էն ղըղանը
պեթինք ա տալիս, որ քառսուն արաբա կարըմ չի տանի: Պեթինքի
նհետ էլ երկու դարավաչ ա տալիս մեր ու ախճըկա: Թն Շարմաղը
հոլրի-մնլնգ էր, դարավաչն էլ ընդանա պակաս չէր: Էս իրեքին
տըղվարըմ են պարախողի մին օթաղըմը, մընացած հըրսընքավո-
րին մին ուրիշ օթաղըմ: Դե նղանթ ա, թնգն փեսեն հարսի կուշտը
քինալի իրավունք չունի, մինչու հըսնեն ոչ տղի տունը, մինչու տղի
տանը հըրսանիքը պըրծընի ոչ: Սըհենց ճոկ-ճոկ ծովովը կնլիս են:

Ղարավաչ ախճիկն ու իւրն մերը չիմմիցը թաքուն մըսըհաթ
են անըմ, որ Շարմաղի կլիխը խաչեն, դարավաչը տնոնն թաքու-
հի, ըտրա մըհար պարախողի ղուլլուղչիններից մինին մեծ ոըշվաթ
են խոստանըմ, էս ղուլլուղչին էլ մին ղուլթի յա ճարըմ, տալիս էր-
կու կընանոցը:

Մեր ու ախճիկ քընած տեղը Շարմաղի աչկերը հանըմ են,
փըթաթըմ յալլողի մեչ, տինըմ կոխկին, իւրն կոխըմ ղուլթին, դա-
փաղը պինդ մեխըմ հու քցըմ ճոլը: Ղարավաչի ախճիկը հըքնըմ
ա Շարմաղի չորերը, մագերը Շարմաղի մընան սարքըմ հու նըչանց
տալիս, թա ինքն ա թաքավորի ախճիկը, ինքն ա հարսնացուն:

Եփ տեղ են հըսնըմ, պարախողիցը տոն են կնլիս, տենըմ են
դարավաչը կա ոչ:

Սըղըմոնը հըրցնըմ ա Շարմաղին:

—Բա դարավաչըտ հո՞ւր ա:

—Ի՞նչ գիղանմ, —ասըմ ա Շարմաղ տնոնն դարավաչը, —ուսվո-
տը տոն եկավ, էլ իրեաց ոչ, հնլընթ ծովն ա ընգել, էլի, էլ հո՞ւր
պիտի քինար:

Սրղըմոնը ուրախ անգաճին վըհատըմ չի, չորերը Շարմաղինն են, սանսը՝ չէ, սիրտն էլ՝ չէ, ախըր Շարմաղը կարալ չէր առանց ցավի ըտենց դինջ խոսար կորած ախճըկա մասի: Երգեն եչըմ ա Շարմաղի իրեսին, մին էլ տենըմ ա՝ փըսպըղան, երգընքի պես կնպոտ աչկերը սևացել են:

—Բա աչկերըտ խի՞ են սևացել,—ասըմ ա:

—Բա հեչտ ա, ուրոուր կըչտի ինենք, ուրոուր կարանք ոչ տենալ,—ասըմ ա ախճիկը,—կարոտիցը աչկերըա էլ սևացան:

Ըստեղ կածկած ա ընգնըմ Սրղըմոնի սիրտը, համա էլ պան չի ասըմ:

Հենց ուզըմ են նըստոտեն հոր դըրկած կառեթին, եղունկը նըստըմ ա Սրղըմոնի ուսին հու ասըմ.—Բախտըտ սև իլավ, ախպե՛րըս, Շարմաղին քըցել են ծովը, էտ ախճիկն էլ Շարմաղը չի, դարավաչն ա:

Ըստեղ Սրղըմոնը պերիլ ա տալիս մին գիժ ծի հու մին գիժ ճորի, մոր մազերը կապիլ ա տալիս ճորու հնքվիցը, ախճկա մազերը ծիան հնքվիցը հու պանց թողըմ: Ծին ու ճորին ըտանց ջանդանքը քցըմ են քար ու քոլով, պակասն էլ քացի տալով գըզըմ, շանսատակ անըմ:

Սրղըմոնը ուրանց առաչը եկողներին թափչուր ա անըմ՝ ետ տանուն հորն ասեն, որ ինքը էնքամ վախտ տուն չի կնլ, մինչու Շարմաղին սաղ թն մեռած ճարի ոչ:

Սաղ ժողովուրթը քոռ ու փոչման ետ են տանըմ, Սրղըմոնը ուրախ Բախտի եղունիկի նհետ քինըմ են Շարմաղին ճարիլի:

Թող ըստանք քինան ուրանց կոռծին, մենք խանքարը տանք Շարմաղիցը:

Ղութին, որի մեչին Շարմաղն ա ինըմ, իչքան ա մընըմ ծովըմը ոչ ով կարալ չի ասի, համա ծովը որ շատ ա լափին տալիս, օրերից մին օր էլ ղութին հանըմ ա հենց էն դըրաղը, շտեղ Սրղըմոնի հոր քնվչանն ա ինըմ:

Մին չորան ըտեղով ասկենալիս ղութին տենըմ ա, գիզըմ ա, թն մեչը լիքը հարըստութուն ա, մին արկաթի կուտուր ա ճարըմ, ղութու ղափաղը պոք տալիս, տենըմ ա մեչին մին նախչուն ախճիկ, համա աչկերը տոտ տըված:

Հըրցընըմ ա.—Ո՞վ ես տու, ա՛յ մարալ ախճիկ, խի՞ են աչկերըտ հանել, ո՞վ ա էտ նամարղութունը արել:

Ախճիկն ասըմ ա.—Հնլանմ ինձանա պան մի՛ հըրցընի, սովածութունիցը հոչըս քինըմ ա, թն կարըմ ես մին կուտուր հա՛ց տու, եղո կըպատմեմ:

Շարմաղի բախտիցը չորանի կըչտին հաց ա ինըմ, մին ոխճար էլ կըթըմ ա հու տալիս Շարմաղին:

Շարմաղը, որ փորի որթը կոտորմ ա, ասըմ ա.—Գիղըմ չեմ՝ տո՛ւ ով ես, ինչ դայդի մարթ ես: Տենըմ չեմ: Թա՛ պառավ ես, ինձ հերութո՛ւն արա, թա՛ Զա՛հլ ես, տա՛ո իմ ախպերը, համա խընթըրմ եմ, մին թիթև օբա սարքի՛, ինձ թող ըստեղ, ես իմ սև օրը լաց ինիլո՛վ մեռնեմ: Էլ ըստանա եղը իմ ապրիլը քանի կապեկ արժի:

Ջոբանն էլ թա՛.—Էլ ո՞ր օրվա հեր յա ախպեր կինեմ, որ քե թողամ էս յաբանի չոլըմը, չէ՛, էտ ինիլի պանն չի: Հես ա օրը թեքվըմ ա, քե կըտանեմ մեր տուն, Աստոճ վերչը պարին կատարի: Իրեք ախճիկ ունեմ, չորսինգինը տո՛ւ կինես: Վախես ոչ, քե քոռո՛ղ տըվող ինիլ չի:

Սըհենց էտ չոբանը Շարմաղին պերըմ ա ուրանց տունը, թափչուր անըմ ախճըկոցը, թա՛ քըվոր տեղ շահեք պահե՛ք, մինչու հալընթ Աստանա մին լիս կըկաթի էս հեղճի կըլխին:

Ախճըկերքն էլ Շարմաղի քեփովն են քինըմ, հալա պերանը պաց արած չի ինըմ, ուզածը ալընհալը պերըմ են:

Թո Շարմաղը մին քանի վախտ մընա չոբանի տանը, մենք խաբարը տանք Սըղըմոնիցը:

Հեղճը շատ որ սար ու քոլ ա ընգնըմ, կարըմ չի Շարմաղի ոնղը քըթնի, ճարը կըտրած ուզըմ ա ուրան բաղի տա, քըցի ծովը, եփ կալիս ա ծովի դըրաղը, բոլըղան տենըմ ա տառտակ դուլթին, դուլթըմն էլ մին յայլոխ, յայլոխըմը էրկու աչկ փըթաթած:

—Կա, կա ոչ, էս դուլթովն են Շարմաղիս ծովը քըցել, էս էլ ընդրա աչկերն են,—ասըմ ա Սըղըմոնը հու նըստըմ հոնգուր-հոնգուր լաց ինըմ:

Էտ մա՛ջալըմը եղունիկը, որ թըռած ա ինըմ Շարմաղի իզը ճարիլի, ետ ա կալիս, նըստըմ Սըղըմոնի ուսին, ասըմ.—Նի՞ ես լաց ինըմ, որ դուլթին կա, Շարմաղը հեռու քինացած չի ինիլ, սիրտըտ պի՛նդ պահի, ճարիլու վենք:

—Ախըր հեղճին կուրըցրել են, աչկերը հանել, հես էն է,—ասըմ ա Սըղըմոնը հու յայլոխի աչկերը նըշանց տալի:

—Դե որ ասըմ եմ՝ հեռու քինացած չի ինիլ, վըհատըմ չես,—ասըմ ա եղունիկը,—տո՛ւ ըստեղ նըստի՛, ես էս սըհաթին կըգիղամ, թա՛ շտեղ ա, էս դուլերըմը չոբաններիցը սավայի ուրիշ մարթ չի ապրըմ:

Եղունիկի քինալն ու կալը մին ա ինըմ, կալիս ա թա՛ չէ, ասըմ ա.—Սըղըմո՛ն, աչկըտ լո՛ւս, Շարմաղին ճարել եմ, վե՛ կաց քինանք:

Կալիս են, կալիս, հըսնըմ են չոբանի տունը, տենըմ են, հեսա չոբանի իրեք ախճիկինն Շարմաղի կլոխը լվացել են, մինը մազերն ա սանղըրըմ, մինը ծաղկափըսակ ա տինըմ կըլխին, մինն էլ տաք կաթ ա թափանգա՛ն անըմ:

Մոտկանքն են, պարե տալիս, պարե առնում, ըստեղ Շարմաղն ասում ա.—Աչկերըս հանած ա, պան չեմ տենում, համա սրբտիս աչկերովը ճընանչեցի Սըղըմոնիս, դի՞ւզ եմ ասում, թի՞ւ չէ:

Սըղըմոնը չօքըմ ա Շարմաղի առաչին, կլի՞սը տընում ծընգանը հու ասում.—Քանի ես կենթանի եմ, քու մազին կըպնող չի ինիլու, տի՛ւ ոչ մին պանի պակաս չես գիղանլի, Շարմա՛ղըս, թի՛ւ Աստոծ էլ քո՞մազ անի, աչկերիտ լիսն էլ կըկա տեղը:

Էս ասիլից եղո աչկերը յայլի՛սիցը հանում ա տալիս Շարմաղին, որ պինդ պահի, կորցընի ոչ:

Մինչու էտ եղունիկը թռած ա ինքն ուրա՛ հընգերների կուշտը, ընդանց պատմած ա ինքն ուրա՛ դարդը, եփ եղունիկներիցը մինը ասում ա.—Քու դարդին դարման անիլը հեշտ ա, թի՛ւ որ աչկերը նհետը ինի: Ես մին անպո՛ւրի տեղ եմ գիղըմ, որի ճո՛ւրը եփ քըցես աչկերին, լիսը կըկա տեղը: Մին բո՛լիւզ եղունիկնի թըռնում են, էտ անպըրիցը ուրանց կընդիչնեքովը ճո՛ւր պերըմ, հըսցընում չօբանի տունը:

Ախպըրի տեղը գիղացող եղունիկը Շարմաղին ասում ա.—Քու աչ կըկտ հեն ա ծախ ջիբըմըտ, ծախ աչկըտ՝ աչի ջիբըմըտ, սմա-լով հանի տի՛ր տեղը:

Եղո ուրա՛ թեփուռիցը երկուսը հանում ա, տալիս Սըղըմոնին, թի՛ւ.—Հենց որ եղունիկինն ճո՛ւրը կաթըցնեն թեփուռին, տի՛ւ քըսի՛ աչկերին, ամման ինչ լավ կինի:

Եղունիկը ոնց ասում ա, ըսենց էլ անում են: Շարմաղի աչկերը թանգան ըսկսում են տենալը: Ախճիկը ուրխութունիցը ծըկըլթըմ ա, ընգնում Սըղըմոնի խըտիտը:

Սըղըմոնը փառք ա տալիս Ասսուն, էլ մաջալ չի կորցընում, վեր ա ունում Շարմաղին էլ, չօբանի քո՛ւլփանթին էլ, կալիս են պալատ:

Հերը որ տենում ա տղին սաղ-սալամաթ, որ տենում ա հո՛ւրի-մալա՛զ հարսին, չօբանի նախշուն ախճիկներին, սիր-տը փառափորվում ա, քառսուն օր, քառսուն քըչեր հըրսանիք ա անում, Սըղըմոնին թանգան փըսակըմ ա Շարմաղի նհետ, չօբա-նի ախճիկներին էլ փըսակըմ ա ուրա՛ նազիր-վա՛զիրների տըղոցը նհետ, թաքավորութունն էլ տալիս ա տղին, ինքը չօբանի նհետ ղըրաղ քաշվում, եղըմ ջա՛հիլների ուրախ գյանքին հու փառք տալիս ամենակարողին:

Ընդանք հըսնում են ուրանց մուրազին, տի՛ւք էլ հըսնեք ծի մու-րազին, ես էլ քինամ քընեմ, բալքի արազըմըս մին լավ նաղըլ էլ սըվորեմ, որ էքուց պատմեմ: